Աւետարանէն լուսանկարած ենք խորանանկարները և տէրունական նկարները՝ թուով 24 տեսակ։

* * *

Գրիգոր Տաթեւացիի այս աւետարանը Տաթեւի հռչակաւոր մենաստանի թանգարժէք հարստութիւններէն մէկն է, իբր հրաշագործ մասունք՝ յաչս Զանգեզուրի գեղջուկ ու բարեպաշտ ժողովրդեան։

Ժողովուրդը անհուն սիրով ու ջերմ հաւատքով կապուած է այս աւետարանին և անոր սրբազան տիրոջ՝ Գրիգոր Տաթեւացիին հետ, որուն գերեզմանն ալ ուխտատեղի է հաւատացեալներուն համար, որոնց աչքին Տաթեւացին հրաշագործ սուրբ է։

Տաթեւի վանքին արքեպիսկոպոսական հանդերձները (պաստարագչի) ինչպէս նաեւ այս աւետարանը պատերազմի և իրար յաջորդող դէպքերու տարիներուն փոխադրուեցան Թաւրիզ և այժմ իբր ազգային աւանդ կը պահուին Հայոց Առաջնորդարանին մէջ, Տաթեւի երբեմնի վանահայր և Ատրպատականի Հայոց արդի Առաջնորդ Դեր. Տէր Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանի հսկողութեան տակ։

Թաւրիզ
24 Ապրիլ 1933

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ

ԼՈՆՏՈՆԻ
(ԹԱՒՐԻԶՈՒ)
Թ. 66 ԱՒԵՏԱՐԱՆԸ

Թուղթք՝ 252. — Մեծութիւն՝ 16×12×4 հրգմ. — Գրութիւն՝ երկսիւն. — Նիւթ՝ լաւ յղկուած թուղթ, գեղնորակ. — Տողք՝ 21. — Կազմ՝ կարմիր թուղթէ երեսով խաւաքարտեայ, Նոր. — Մագաղաթեայ պահպանակք չկան. — Հանգամանք՝ լաւ պահուած. սկզբնական կաշեայ կողքերը ինկած և ի նորոյ կազմուած. մաշած շրթունքները դանակի տակ կտրուած լուսանցքի զարդերը վնասուած։ Զորս աւետարաններն ալ ունին իրենց մանրատառ նախադրութիւնները. ստորին լուսանցքներու վրայ կան համաբարբառի համարանիշերը, սեւ ու կոկիկ գրով։ Զորս աւետարաններն ալ լման են, ինչպէս նաեւ յիշատակարանը. — Դատարկ թերթք՝ չորս թերթ սկիզբն ու վերջը. — Սկզբնատառք իւրաքանչիւր խորանազարդ էջի վրայ, մարդագիր, կենդանագիր և թռչնագիր, վայելուչ նկարչութեամբ. համարները ունին կարմրագեղ յաջող երկաթագրեր. — Գիր՝ սեւ մելանով ընտիր բոլորգիր. — Վերնագիրք՝ իւրաքանչիւր խորանազարդ էջի վրայ, միշտ երեքական տող. առաջինը զարդագիր, գունազարդ, յաջորդական տողերը կարմրագեղ և մանուշակի կարմիր երկաթագիր. — Լուսանցազարդք՝ չորս մեծ, իւրաքանչիւր խորանի կից, զարդարուն։ Ներքին բոլոր լուսանցազարդերը սովորական մորիֆներ, կարմիրի և լազուարտի ծաղկումով. — Խորանք չորս հատ, չորս աւետարաններու սկիզբը, էջ 1. 139. 229 և 383, բոլորն ալ հայկական և պարսկական մորիֆներ յաջող ծաղկումներ, լազուարտ յատակի վրայ, մեծ ու փոքր վարդեակներով. — Նկարք, մանրանկարք և կիսախորանք կը պակսին։

Գրիչ՝ Անանիա արեղայ. — Ստացող՝ Ստեփանոս քհնյ. — Տեղի՝ Հերմոնի վանք. — Ժամանակ՝ ՋԺԸ (+ 551) = 1469. — Ծաղկող՝ անյայտ։ Ձեռագիրս 1926 մարտ

6ին նուէր տրուած է Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյն, Խաչիկ Խան Սարաճեանի կողմէ։

Մատեանս է Աւետարան, թղթեայ, նկարուն, ուր կան չորս աւետարանները լման. կը պակսի «իբրք կնոջն շնացելոյ» մասը։

Յիշատակարան՝

Ա. — Էջ 500ի վերջ Յովհաննու աւետարանի. — «Փառք անեղ Բանին աստուծոյ։ Երիցն ի միում կատարեալ առանձնաւորութեամբ. և միաւորեալ ըստ աստուածութեան, եռահրաշ...։

Եւ արդ գրեցաւ սա ի թուաբերութեանս հայոց։ ՋԺԸ։ (1469) ի հայրապետութեանս տեառն Ըռըստակէսի։ Գրեցաւ սուրբ աւետարանս ի վանքս Հերմոնի ընդ հովանեաւ սուրբ յուսաւորչիս և սուրբ յակոբիս և սուրբ ստեփանոսիս. և սուրբ վարդապետացս որ աստ կան հանգուցեալ։ և ի յառաջնորդութեան սարգիս դարձուցեալ։ Ձեռամբ սուտ յանուն անանիեայի գրչի. որ անուամ(բ)ս միայն խաբեղա և ոչ գործով։ Արդ ամենայն ոք բարոյ ցանկայ վասն սիրոյ արքայութեան որպէս ասէ առաքեալն. թէ երանի որ ունիցի զաւակ ի սիոնի և ընդանի եմ։ Ես ստեփանոս քահանայս. ստացայ սուրբ աւետարանս, և ետու գրել զսայ յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց. հաւրն իմոն ամիրին, և մաւր իմ բաձիկին. և հարեղբաւրն իմ մկրտչի յուսակրաւն աբեղայի, և կողակցին խրմարին? և որդին իւր յակոբ. աղեքսանոս, գրիգոր, արիստակէսն։ և զդուստրն իմ զմարգարիտն. և զքոյրն իմ նուռմնիք, զհռոփսիմէ, և զա արեան մերձաւորսն. զկենդանիսն և զհանգուցեալսն. և աստուած որ առատն է ի տուրս ողորմութեան ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի իւր միւսանգամ գալըստեամբն ամէն և եղիցի։

«Դարձեալ յերես անգեալ աղաչեմք զձեզ ով մանգունք սուրբ եկեղեցոյ որք կարդալով կամ աւրինակելով զվերին ըստացող սուրբ աւետարանիս զուստայ միրանն որ ըստացաւ զսայ յիշատակ իւրն և ծընաւղացն իւրոց, ուստայ յակոբին և կողակցին իւրոյ տայուսին և իւր զաւակին ձանփաշին նիկարին. քրիստոս աստուած աւրհնէ զուստայ զմիրաւն և զիր որդին և զիռոփիայր և զչահկուշ որ և զմայրն սոցա զհռոփսիմայն. յիշեցէք ի քրիստոս և աստուած զձեզ յիշէ ամէն»։

Բ. — Էջ 501. — Դարձեալ վերջին ստացող սուրբ աւետարանիս ըռըստակէս քհյ. որ ստացայ մեսրովպ նպկէ զաւետարանս ի հալալ ընչից իմոց, առի. ժ.ռ. դահեկ։ Յիշատակ ինձ և ծնողաց իմոց. հօրն իմ խուդասպին, մաւրն իմ պկկի խաթունին, կողակիցն իմ տիրպարին, որդոյն իմոյ զաքարայ նորաբողբոջ սարկաւագին. ադամին. առ հասարակ ամենայն աշխատողացն սոցայ յիշեցէք զտէրն ամենայնի։ Ի թվ. ռժև (1566). ի յառաջնորդութեան սուրբ աբրոռոյս ստարէի, ըստեփանսարհնպկի. ի թագաւորութեան շահ թահմազին, կաթողիկոսութիւն էջմիածնին Տէր Միքայէլին։

Լոնտոն, 25 Օգոստոս 1934

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊ.

digitised by A.R.A.R.@